Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Ս. Աթանեսյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Մերի Հարությունյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Ռուանդայի Հանրապետության Կիգալի քաղաք՝ 2024թ. փետրվարի 14-ից 16-ը:

4. ***Հրավիրող կողմը***
   «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի թիմ

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի փորձիգիտական խմբի հանդիպմանը

6. ***Քննարկված թեմաները, ելույթները և հանդիպումները***

2024թ. փետրվարի 14-ից 16-ը տեղի ունեցած «Վերջ պլաստիկ աղտոտմանը» Բարձր հավակնության կոալիցիայի (Կոալիցիա) փորձիգիտական խմբի հանդիպման հիմնական նպատակներն էին.

- ✓ Աջակցել Կոալիցիայի անդամներին պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի 4-րդ նիստի (INC-4) համար իրենց ազգային դիրքորոշումների նախապատրաստման մեջ,

- ✓ Քննարկել ապագա համաձայնագրի նախագծի հիմնական ասպեկտները, գնահատել նախագծի հոդվածների տարբերակները՝ հիմնական արդյունքների լույսի ներքո,
- ✓ Քննարկել Կոալիցիայի դերը INC-4-ում, այդ թվում նախապատրաստական և ներգրավվածության ռազմավարությունները:
- ✓ Ուսումնասիրել ռազմավարական մոտեցումներն ու ընդհանուր ուղիները՝ INC-4-ում էական առաջընթաց ապահովելու համար՝ բովանդակալից և հավակնոտ համաձայնագրի ձևավորման նպատակով:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցան հետևյալ քննարկումները՝

1) **INC-4-ի ներկայացում՝ ներառյալ կազմակերպչական և ռազմավարական ասպեկտները.** Տվյալ կետի շրջանակներում INC քարտուղարության կողմից ներկայացվեցին INC-4-ի կազմակերպման հետ կապված հարցերը՝ ներառյալ օրակարգը, միջոցառումները, մասնակիցները (https://www.unep.org/inc-plastic-pollution/session-4): INC –ի նախագահի կողմից ներկայացվեցին առաջիկա INC-4-ի հիմնական անելիքները և մարտահրավերները:

2) **Ապագա համաձայնագրի նախագծի (Նախագիծ) բաժինների քննարկում:**
*Տվյալ կետի շրջանակներում տեղի ունեցան խմբային քննարկումներ հետևյալ թեմաներով.*

- ✓ ***Զսպել և նվազեցնել պլաստիկի սպառումը և արտադրությունը մինչև կայուն մակարդակ***

  *Հանդիպման մասնակիցների կողմից կարևորվեց պլաստիկ արտադրանքի սպառման և արտադրության զսպման ու կրճատման անհրաժեշտությունը, դիտարկելով այդ գործողությունները պլաստիկ աղտոտմանը վերջ տալու կարևոր նախապայման: Միաժամանակ կարևորվեց նաև շրջանաձև տնտեսությանն ուղղված բոլոր ջանքերի մոբիլիզացման անհրաժեշտությունը և թափոնների կառավարման համակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը: Ելնելով վերոնշյալ նկատառումներից կոալիցիայի անդամների կողմից կարևորվեց ապագա համաձայնագրում հստակ պարտավորությունների սահմանումը՝ պլաստիկի սպառումը և արտադրությունը մինչև կայուն մակարդակ հասցնելու համար:*

- ✓ ***Շրջանաձև տնտեսությունը՝ որպես պլաստիկ աղտոտման նվազեցման արդյունավետ գործիք***

*Հանդիպման մասնակիցների կողմից քննարկվեցին ապագայում օգտագործվող պլաստիկի հնարավորինս երկար շրջանառությունն ապահովելու ասպեկտները՝ այդ թվում պլաստիկ արտադրանքի վերաօգտագործման, վերանորոգման, վերամշակման առանձնահատկությունները: Քննարկվեցին նաև շրջանաձև տնտեսությունը խթանող գործիքակազմի առանձնահատկությունները՝ այդ թվում արտադրանքի դիզայնի և պիտակավորման, արտադրողի ընդլայնված պատասխանատվության, թափանցիկության ապահովման հետ կապված հարցերը: Ելնելով վերոնշյալ նկատառումներից կոալիցիայի անդամների կողմից կարևորվեց ապագա համաձայնագրում հստակ պարտավորությունների սահմանումը՝ շրջանաձև տնտեսության խթանումը ապահովելու նպատակով:*

- ✓ ***Պլաստիկ թափոնների էկոլոգիապես մաքուր կառավարում և առկա աղտոտվածության վերացում***

*Հանդիպման մասնակիցների կողմից քննարկվեցին թափոնների կառավարման հիմնական մարտահրավերները՝ այդ թվում թափոնների նվազեցման և երկրորդային հումքի ստացման առանձնահատկությունները, թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման ասպեկտները: Քննարկվեցին նաև շրջակա միջավայրում արդեն իսկ գոյություն ունեցող պլաստիկ աղտոտման հիմնահարցի լուծման մարտահրավերները: Ելնելով վերոնշյալ նկատառումներից կոալիցիայի անդամների կողմից կարևորվեց ապագա համաձայնագրում հստակ պարտավորությունների սահմանումը՝ գոյություն ունեցող պլաստիկ աղտոտման նվազեցման կայուն մեխանիզմների ներդրման համար:*

- ✓ ***Ապագա համաձայնագրի իրականացման գործիքները և միջոցները***

*Հանդիպման մասնակիցների կողմից քննարկվեցին ապագա համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացման, ֆինանսավորման կարիքների, թափանցիկության, հաշվետվողականության, ազգային գործողությունների ծրագրերի հետ կապված հարցերը: Կարևորվեց կարողությունների զարգացման, կրթական ծրագրերի, տեխնոլոգիաների զարգացման, լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման, փորձի փոխանական արդյունավետ համակարգերի ներդրման անհրաժեշտությունը: Քննարկվեցին նաև ապագա համաձայնագրի իրականացմաան համար անհրաժեշտ ռեսուրսների մոբիլիզացիայի հետ կապված հարցերը՝ այդ թվում նպատակային բազմակող հիմնադրամների ստեղծման և արդեն իսկ գոյություն ունեցող դոնոր ինստիտուտների միջոցով խնդրո առարկա ոլորտի*

*նպատակների իրականացման համար համապատասխան ծրագրերի իրականացման համար կայուն մեխանիզմների ներդրման ասպեկտները: Ելնելով վերոնշյալ նկատառումներից կոալիցիայի անդամների կողմից կարևորվեց ապագա համաձայնագրում հստակ պարտավորությունների սահմանումը՝ կարողությունների զարգացման, ֆինանսավորման կարիքների, թափանցիկության, հաշվետվողականության, ազգային գործողությունների ծրագրերի հետ կապված միջոցառումների իրականացման նպատակով կայուն մեխանիզմների ներդրման համար:*

Քննարկումներին ցուցաբերել եմ ակտիվ մասնակցություն՝ ապահովելով նոր համաձայնագրի մշակման հարցում ՇՄՆ դիրքորոշման ներկայացումը՝ մասնավորապես անդրադառնալով հետևյալ ասպեկտներին՝

- անցումային տնտեսությամբ երկրները պետք է ունենան Համաձայնագրի իրականացման, կարողությունների զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման համար ֆինանսական միջոցների հասանելություն,
- շրջակա միավայրի բոլոր բաղադրիչներում (ջուր, հող, օդ, կենսաբազմազանություն, էկոհամակարգեր) կարևորվում է գիտական և տեխնիկական նորարարությունների իրականացումը՝ ուղղված պլաստիկ աղտոտման կանխարգելմանը և նվազեցմանը,
- Համաձայնագրի նպատակների իրականացման համար նախընտրելի է նպատակային նոր բազմակողմ հիմնադրամի ստեղծումը,
- Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (EPR) համակարգի դիտարկումը որպես Համաձայնագրի իրագործման հիմնական գործիք:

3) **Կոալիցիայի ընթացիկ և նախատեսվող աշխատանքների քննարկում:**

*Տվյալ կետի շրջանակներում Կոալիցայի ղեկավար թիմի կողմից ներկայացվեցին 2024թ.-ի ընթացքում նախատեսվող միջոցառումները, տեղի ունեցան քննարկումներ Կոալիցիայի հետագա գործունեությունը ավելի արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ:*

Հանդիպման շրջանակներում հնարավորություն ունեցա ծանոթանալու նաև նոր համաձայնագրի մշակման հարցում մի շարք երկրների դիրքորոշումներին, ինչպես նաև վերջիններիս կողմից իրականացված և նախատեսվող միջոցառումներին՝ ուղղված պլաստիկ աղտոտման հիմնախնդրի լուծմանը:

Հանդիպմանը մասնակցում էին 60-ից ավել մասնակիցներ տարբեր երկրներից (Վրաստան, Մոլդովա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Նորվեգիա, Նիդեռլանդներ, Ուռուգվայ, Չիլի, Մեծ Բրիտանիա, Կանադա, Մեքսիկա, Գանա, և այլն):

7. ***<u>Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>***

Հանդիպման շրջանակներում որոշումներ չեն ընդունվել: Պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիքի նախնական նախագծի վերաբերյալ Կոալիցիայի անդամ երկրների փորձագետների կողմից արված առաջարկությունները կամփոփվեն տվյալ հանդիպման հաշվետվության մեջ, իսկ Կոալիցիայի անդամ երկրների ներկայացուցիչների հերթական հանդիպումները կկազմակերպվեն ս/թ ապրիլին Օտտավայում կայանալիք պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի 4-րդ նիստի ընթացքում:

Ռազմավարական քաղաքականության վարչության
գլխավոր մասնագետ՝ Մ. Հարությունյան

20.02.2024թ.